

Տեղեկատվություն

<<Դիլիջան>> ԱՊ ՊՈԱԿ-ի 2015թ-ի նոյեմբեր ամսվա կատարված աշխատանքների Նոյեմբեր ամսին <<Դիլիջան>> ԱՊ ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի կողմից իրականացնել է 4 հա անտառի ցանքս՝ <<Դիլիջան տեղամաս>> մ/ճ-ում 1 հա, <<Շամախյան տեղամաս>> մ/ճ-ում 1 հա, <<Հաղարծին տեղամաս>> մ/ճ-ում 2 հա:

20.11.2015թվականին ավարտվել է <<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի 2015թվականի աշնանային հերթական ստուգողական ստուգումը, արդյունքները ամփոփվել և ուղարկվել են ՀՀ բնապահպանության նախարարություն: Աշնանային հերթական և ստուգողական ստուգումների ընթացքում հայտնաբերած անտառխախտումների վերաբերյալ մասնաճյուղի ղեկավարներին տրվել է հանձնարարություն տասնօրյա ժամկետում հայտնաբերել անտառխախտողներին և վերականգնել անտառին հասցրած վնասը, հակառակ դեպքում անտառին հասցրած վնասը կվերականգվի մասնաճյուղի տեսուչի կամ մասնաճյուղի ղեկավարի կողմից: ԱՊ-ի տարածքում շարունակվում է վառելափայտի իրացումը՝ նախկինում հորդառատ անձրևների հետևանքով տապալված և քամատապալ ծառերից առաջացած փայտանյութից: Կազմակերպության աշխատակիցների կողմից հաշվառվել են 2015թ-ի նոյեբեր ամսվա ուժեղ քամիների հետևանքով առաջացած քամատապալ ծառերը և դրանց հաշվարկների հաշվեգնհատման ցուցակները ուղարկվել են ՀՀ բնապահպանության նախարարություն: Պահպանության բաժնի աշխատակիցների կողմից նոյեմբեր ամսում ԱՊ-ի տարածքում հայտնաբերվել է ապօրինի հատված 5 ծառ, որոնց համար կազմվել է 5 հատ անտառխախտման արձանագրություն և ուղարկվել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին՝ ընթացք տալու:

Գիտական բաժնի կողմից կատարվել է վայրի պտղատուների և հիմնական ծառատեսակների (հաճարենի, կաղնի, բոխի) ֆենոլոգիայի ուսումնասիրում, քարտադարանի լրացում: Գիհու սերմերի հավաքում, մասրենու բուսատեսակի ուսումնասիրություն: Աշնանային տերևաթափի և երևույթների ուսումնասիրություն: Ուսումնասիրվել է կրծողների դասի սկյուռ կենդանատեսակը:

Ռեկրեացիայի բաժնի կողմից ավարտվել են <<Դիլիջան>> ազգային պարկ ՊՈԱԿ-ի 2014 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված ազգային պարկի անվանմամբ գրիչների ձեռք բերման և 2016թ-ի համար նախատեսված բնապահպանական օրացույցի տպագրման աշխատանքները: